ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 23-ը հունվարի 2023թ.
Ժամը 10^{00}

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 1-ին բաժնի պետ Ա. Նազարյան,
գնահատողներ՝
ՀՀ ԶՈՒ ՌԲ վարչության ՆՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Ա. Միրաքյան,
ՀՀ ԶՈՒ ՌԲ վարչության ՆՏԱ բաժնի ավագ սպա բ/ծ փոխգնդապետ Հ. Հովհաննիսյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Կ. Բեկնազարյան,
հանձնաժողովի քարտուղար՝
ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյան

Հանձնաժողովն արձանագրեց հայտի բացման փաստը և նույն օրը ժամը՝ 17:00-ին կայացած նիստում շարունակեց աշխատանքները:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/8» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակցի մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/8» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված և ընտրված մասնակցի որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակցի մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Բժշկական թթվածնի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/8» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանումը
1.	«Շիրինյան Եղբայրներ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/8» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Ա. Մաղաքյան)

2.1 «Շիրինյան Եղբայրներ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի.

2.2 Շիրինյան Եղբայրներ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Մասնակիցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ա. Մաղաքյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Գնման առարկա	Չ/մ	Քանակը	Գնման գին	Մրցույթին մասնակցող կազմակերպության				
					Հ/հ	Անվանումները	Գնային առաջարկ /ՀՀ դրամ/		
							Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	Բժշկական թթվածնի	հատ	1350	3,774,600	1	«Շիրինյան Եղբայրներ» ՍՊԸ	4,725,000	0	4,725,000

3.2 «Շիրինյան Եղբայրներ» ՍՊԸ-ի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Ըստ ներկայացված տվյալների՝ «Շիրինյան Եղբայրներ» ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող չէ:

Քանի որ «Շիրինյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գինը գերազանցում էր պատվիրատուի տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի կառուցվածքային ստորաբաժանման ներկայացուցիչ-հանձնաժողովի անդամ Ա. Միրաքյանի կողմից առաջարկվեց կիրառել ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշման 40-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված հնարավորությունը:

Հիմք ընդունելով վերը նշված առաջարկը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը՝ մինչև առաջարկի վերաբերյալ համապատասխան քննարկումների արդյունքում վերջնական որոշում կայացնելը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Գնահատող հանձնաժողովի առաջարկության վերաբերյալ կայացրած որոշման քննարկման մասին.

(Ա. Մաղաքյան)

4.1 26.01.2023թ. կայացած նիստում հիմք ընդունելով կառուցվածքային ստորաբաժանման կողմից ներկայացված գրությունը, առաջնորդվելով տվյալ հարցի վերաբերյալ պատվիրատուի ղեկավարի դիրքորոշմամբ, ուսումնասիրության և քննարկումների արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց՝ **բժշկական թթվածնի** մասով կիրառել ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշման 40-րդ կետի 6-րդ ենթակետի պարբերությունը և ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ **«Շիրինյան Եղբայրներ» ՍՊԸ-ին** հայտարարել ընտրված մասնակից և կնքել պայմանագիր՝ գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու պայմանով:

Ընդունել ի գիտություն, որ 26.01.2023թ. կայացած նիստում բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ ՀՀ ՋՈՒ ՌԲ վարչության ՆՏԱ բաժնի ավագ սպա բ/ծ փոխգնդապետ Հ. Հովհաննիսյանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

5. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած «Շիրինյան Եղբայրներ» ՍՊԸ-ին ընտրած մասակից ճանաչելու որոշման մասին.

(Ա. Մաղաքյան)

5.1 **26.01.2023թ.**-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկի հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված **«Շիրինյան Եղբայրներ» ՍՊԸ**-ին ճանաչել ընտրված մասնակից.

5.2 Գնահատող հանձնաժողովը հաստատեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/8» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

5.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/8» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները: **Սույն ընթացակարգի շրջանակում անգործության ժամկետ չի կիրառվել, քանի որ հայտ ներկայացրած մասնակիցը միակն էր:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Ա. Մաղաքյան)

6.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Ա. Մաղաքյան)

7.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/8» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:'

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Նազարյան
Գնահատող	Ա. Միրաքյան
Գնահատող	Հ. Հովհաննիսյան
Գնահատող	Կ. Բեկնազարյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Մաղաքյան